


ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՀԵՏ

Գրեց՝ ՓՐՈՖ. Ի. ԿՈՒՍԻԿԵԱՆ



ՄԵՅՃԸՐ ԶՕՐԱՎԱՐ ԼԵՒՈՆ ՕՐԲԵԼԻ, Հայագրի նշանաւոր գիտնականը, Սովետ Միութեան Գիտութեանց Ակադեմիայի Փոխ Նախագահը: Լեւոն Օրբելի Սովետ առաջնակարգ բնախօս է: Ան բըժըշկապետն է Զղայիս Գործունէութեան Հիմնարկութեան և Փավլովի Կենսաբանական Հիմնարկութեան մէջ: Ակադեմիական Լեւոն Օրբելի այս աւտիռ նկարը առնուած է Սովետ Միութեան Գիտութեանց Ակադեմիայի Նիստին, որու Նախագահութեան անդամ ընտրուած էր: Ան եղբայրն է Սովետ Հայաստանի Գիտական Ակադեմիայի Նախագահ յայտնի բանասէր Յովսէփ Օրբելիի:

ՄՈՍԿՎԱ, Մարտ 20. — Ես երեք անգամ հանդիպում ունեցա՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան Գիտական Ակադեմիայի Փոխ-Նախագահ Վիկտոր Համբարձումեանի հետ: Ան եկած էր Մոսկիւ, մասնակցելու համար Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան Գիտական Ակադեմիայի նիստին, որ տեղի ունեցաւ Փետրուար ամսուա մէջ: Մեր խօսակցութիւնները ընդհանրապէս դարձան երիտասարդ Հայկական Ակադեմիայի գործունէութեանց շուրջ:

Հայկական Ակադեմիայի բոլոր անդամները կլանուած են թէ կադմակերպական և թէ դիտական գործերով: Այս տեսակէտէն դժուար է դիժ մը քաշել Ակադեմիայի տարեց և երիտասարդ անդամներու միջև: Թէ հինները և թէ նորերը հաւասարապէս ոգևորուած են և հաւասարապէս եռանդաղին կը գործեն:

Ամենայատկանշական երեւոյթն այն է, որ ընտելութեան լայն խաւերը կը յայտնաբերեն նկատելի շահագրգռութիւն՝ հանդէպ Հայկական Գիտական Ակադեմիան: Օրինակի համար, հարիւրաւոր մարդիկ ներկա եղան Ակադեմիայի այն նիստին, ուր Փրոֆեսոր Պ. Փիոթրովսքին ներկայացուց իր ուսումնասիրութիւնը՝ ստանալու համար Պատմական Գիտութիւններու Տոքթորայի իր տիտղոսը:

Ներկայացուած նիւթն էր ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: Նիստին ունկնդրողներէն մեծ մասը պատմադէտներ չէին, այլ եկած էին անոր համար, որ հրճանք և հպարտութիւն կ'զգային ի տես այն իրողութեան, որ Սովետ Հայաստան այժմ ունէր իր սեփական Գիտական Ակադեմիան: Այս փաստը հրապուրած էր Երևանի մտաւորականութեան լայն շրջանակները՝ ներկա ըլլալու նիստին:

Ակադեմիական Յովսէփ Օրբելի, Հայկական Գիտական Ակադեմիայի Նախագահը անձամբ մեծ շահագրգռութիւն ցոյց տուաւ Փրոֆեսոր Փիոթրովսքի ուսումնասիրութեան նկատմամբ: Ատիկա Հայկական Գիտութիւններու Ակադեմիայի հրատարակած առաջին երկասիրութիւնն է և, ինչպէս Փրոֆեսոր Համբարձումեանը ինձ ըսաւ, Ակադեմիական Յովսէփ Օրբելին անձամբ երեք օր անցուցած էր տպարանի մէջ, ամեն օժանդակութիւն տուած էր դիւրքը հրատարակութեան համար պատրաստելու աշխատանքներու և դրքի հրատարակութեան մէջ:

Ակադեմիական Յովսէփ Օրբելին ինք վարպետ տպագրիչ է: Քսան և հինգ տարի առաջ, երբ ան Փրոֆեսոր էր Լենինկրատի Համալսարանի մէջ, ինքն իր սեփական ձեռքով շարած էր Եօթներորդ Դարու Հայ Գիտնական Անանիա Շիրակացիի դրքի գրերը, դումարները և լուծումները: Գրքին կցուած էր նաև Հայերէն բընագրի Ռուսերէն թարգմանութիւնը, զոր կատարած էր Յովսէփ Օրբելին:

Առիթէն օգտուելով հարցուցի Ակադեմիական Վիկտոր Համբարձումեանին, թէ արդեօք ինք պիտի հրատարակէ՞ փրոֆեսորական իր քործը շարունակելէ, նկատի ունենալով իր այն նոր պարտականութիւնները, որոնք կապուած են Ակադեմիայի Նախագահի պաշտօնին հետ: Ան պատասխանեց, թէ ինք մինչև այն աստիճան կապուած է Համալսարանին հետ, որ իրեն համար անկարելի է ինքզինքը սահմանափակել բացառապէս Ակադեմիայով և գիտութեամբ:

Ակադեմիական Վիկտոր Համբարձումեան կը սիրէ երիտասարդութիւնը և կը փորձէ անոնց մէջէն ընտրել այնպիսիներ, որոնք ընդունակութիւն և տաղանդ ունին գիտական գործունէութիւններ ունենալու: Ակադեմիական Համբարձումեան նկատի ունի գործել ոչ միայն Երևանի Պետական Համալսարանին, այլ նաև Լենինկրատի Համալսարանին մէջ, որ այնքան փափուկ տեղ մը գրուած է իր սրտին մէջ, և որուն համար ինք ոչ նազ աշխատած է:

Ակադեմիական Համբարձումեան կարճ ժամանակէն իր ընտանիքին հետ միասին պիտի մեկնի Երևան: Որպէս աստղաբնագէտ, ան կ'ուղչ գիտական գործ վարել ոչ միայն Հայկական Գիտական Ակադեմիայի պատերէն ներս, այլ նաև Երևանի Պետական Համալսարանին մէջ: Ան շահագրգռուած է Երևանի Աստղագիտարանը վերակառուցանելու գաղափարով:

Հրատեղչի պահուն, Ակադեմիական Վիկտոր Համբարձումեան ըսաւ.

«Հայաստանի Գիտութեանց Ակադեմիան սկսած է իր շուրջ համալսմբել բոլոր այն գիտնական ուժերը, որոնք ի վիճակի պիտի ըլլան մասնակցելու մեծ գործին, որ յառաջ պիտի տարի Սովետ Հայաստանի մայրաքաղաք Երևանի մէջ: Կը յուսամ, որ դուք ևս ձեր մասնակցութիւնը պիտի բերէք Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի գործին»:

(Շարունակութիւնը Տեսնել Երկրորդ էջ)

Այս բառերը արտասանւեցան առանց ձեւականութիւններու այս
երկտասարդ, բայց արդէն իսկ արժանաւոր Սովետ դիտնականին
կողմէ: Խորհեցա, որ այդ բառերը ոչ միայն հրաւէր, այլ կոչ էին
այն ժողովուրդին կողմէ, որուն կը պատկանինք ինք եւ ես: Հայ
ժողովուրդը երջանիկ է այն դիտակցութեամբ, որ նոյն իսկ պատե-
րազմի ամենածանր օրերուն, ինք ի վիճակի եղաւ, մեր մեծ Սովետ
Միութեան ժողովուրդներու օգնութեամբ, հաստատել դիտական
իր սեփական կեդրոնը: